ՄԻԱՍՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

2024

ՀՈՒԼԻՍ

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ԹԵՍՏ 5

Խմբի համարը

Նստարանի համարը

Հարգելի՛ դիմորդ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք և պատասխանների առաջարկվող տարբերակները: Եթե Ձեզ չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք այն բաց թողնել և դրան անդրադառնալ ավելի ուշ:

Ձեր առջև դրված թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը ազատորեն կարող եք օգտագործել սևագրության համար: ***Թեստ-գրքույկը չի ստուգվում: Ստուգվում է միայն պատասխանների ձևաթուղթը:***

Առաջադրանքները կատարելուց հետո չմոռանաք պատասխանները ուշադիր և խնամքով նշել պատասխանների ձևաթղթում: Պատասխանների ձևաթղթի ճիշտ լրացումից է կախված Ձեր քննական միավորը:

Մաղթում ենք հաջողություն:

Ա ՄԱԿԱՐԴԱԿ

1 Ե՞րբ է գահակալել Դավիթ Անհողինը.

1) 998–1048 թթ.
2) 989–1048 թթ.
3) 998–1058 թթ.
4) 989–1047 թթ.

2 Ե՞րբ են մոնղոլներն առաջին անգամ ներխուժել Այսրկովկաս.

1) 1226 թ.
2) 1231 թ.
3) 1236 թ.
4) 1220 թ.

3 XIX դարի առաջին ռուս-թուրքական պատերազմի ժամանակ ռուսական զորքը ե՞րբ է գրավել Ախալքալաքի բերդը.

1) 1811 թ.
2) 1810 թ.
3) 1809 թ.
4) 1812 թ.

4 Դրոյի և Նժդեհի ջոկատները Զանգեզուրից մտել են Արցախ՝

1) 1919 թ. հոկտեմբերին
2) 1919 թ. դեկտեմբերին
3) 1919 թ. հուլիսին
4) 1920 թ. ապրիլին

5 ՀՍԽՀ-ում գյուղատնտեսական միասնական հարկը շրջանառության մեջ է մտել՝

1) 1921 թ.
2) 1922 թ.
3) 1923 թ.
4) 1924 թ.

6 Արամ անունով երկիրը հիշատակվում էր դեռևս՝

1) Ք. ա. XXIII դարում
2) Ք. ա. XXII դարում
3) Ք. ա. XXIV դարում
4) Ք. ա. XXVIII դարում

7 Ե՞րբ է արգելվել հայկական մեհենագրության գործածությունը.

1) III դարում
2) V դարում
3) IV դարում
4) II դարում

8 Ե՞րբ է հրապարակվել ՀՅԴ հռչակագիրը.

1) 1891 թ.
2) 1890 թ.
3) 1893 թ.
4) 1892 թ.

9 Որքա՞ն էր նախարարական հեծելազորի ընդհանուր թիվն ըստ «Զորանամակ»-ի.

1) 35 000
2) 55 000
3) 48 0000
4) 27 000

10 Ո՞վ է հատել մեզ հասած առաջին հայկական արքայական դրամները.

1) Երվանդ I
2) Երվանդ II
3) Արշամ
4) Շամ

11 Ո՞վ էր հայոց իշխանն ու սպարապետը 748–750 թթ. ապստամբության սկզբին.

1) Արտավազդ Մամիկոնյանը
2) Սմբատ Բագրատունին
3) Աշոտ Բագրատունին
4) Դավիթ Մամիկոնյանը

12 Ստորև նշված տարածքներից ո՞րը չի մտել Վահրամյանների իշխանության մեջ.

1) Գարդման
2) Փառիսոս
3) Ջավախք
4) Տավուշ

13 **Միջազգային ո՞ր կազմակերպությանն է անդամակցել ՀՀ–ն 1991 դեկտեմբերի 21-ին.**

1) ԵԱՏՄ
2) ՄԱԿ
3) Եվրախորհուրդ
4) ԱՊՀ

14 **Ո՞ր գավառը չէր մտնում ռուս–թուրքական 1877–1878 թթ. պատերազմից հետո ձևավորված Կարսի մարզի մեջ.**

1) Ալաշկերտի
2) Կաղզվանի
3) Արդահանի
4) Օլթիի

15 **Որքա՞ն հայկական եկեղեցիներ և վանքեր ավերվեցին կամ կողոպտվեցին Մեծ եղեռնի ժամանակ.**

1) 2350
2) 2550
3) 1500
4) 2000

16 **1920–ական թթ. սկզբին որտե՞ղ էին ամենամարդաշատ հայկական գաղթօջախները.**

1) ԱՄՆ–ում և Կանադայում
2) Սիրիայում և Լիբանանում
3) Ֆրանսիայում և Իրանում
4) Բուլղարիայում և Ռումինիայում

17 **Ո՞ւմ որոշումից է մեջբերված հատվածը.**

«Պատրաստ լինել իշխանությունը գրավելու, երբ նեցուկ կունենանք մի հարևան երկիր, որով հնարավոր կլինի կապվել բանվորագյուղացիական Ռուսաստանի հետ»:

1) Հայաստանի կոմունիստական կազմակերպությունների՝ Բաքվում հրավիրված առաջին կոնֆերանսի
2) հայ բոլշևիկների Ալեքսանդրապոլի կոմիտեի
3) Հայաստանի կոմունիստական կազմակերպությունների՝ Երևանում հրավիրված առաջին կոնֆերանսի
4) Հայաստանի կոմունիստական կազմակերպությունների՝ Թիֆլիսում հրավիրված առաջին կոնֆերանսի

18 **Ո՞ւմ դեմ կատարած արշավանքից էր վերադարձել հայոց արքան.**

«Հայոց թագավորը վերադարձավ մեծ հաղթությամբ, շատ ավարով ու ցնծալից ուրախությամբ. նա վերադարձավ Հայաստան՝ Այրարատ գավառը՝ Վաղարշապատ քաղաքը. եկավ մեծ ուրախությամբ, բարի անունով ու շատ ավարով»:

1) Հռոմեական կայսրության
2) Կապադովկիայի
3) Կովկասի լեռնականների
4) Պարսկաստանի

19 **Ընտրել պատմական տերմինների սխալ բացատրությունները.**

ա. Թեգարամա երկիրն այդպես է կոչվել Արամ նահապետի հոր՝ Թորգոմի անունից:
բ. Ուրարտուն Արարատ անվան ասորեստանյան տարբերակն է:
գ. Հայասա՝ խեթերեն նշանակում է մեծ երկիր:
դ. Հունական ավանդության համաձայն՝ Հայաստանի Արմենիա անվանումն առաջացել է արգոնավորդ Յասոնի անունից:
ե. Տուշպա անունը համարժեք է արդի հայերենի Տոսպ անվանը:
զ. Հայաստանում I-III դարերն ընդգրկող ժամանակաշրջանը հայտնի է «ուշ հելլենիզմ» անունով:

1) բ, դ, ե
2) ա, գ, դ
3) բ, ե, զ
4) ա, գ, զ

20 **1863 թ. Ազգային սահմանադրության համաձայն՝ արևմտահայության կյանքը կազմակերպող մարմիններից Ազգային ժողովը կոչվել է նաև՝**

1) Ազգային խորհուրդ
2) Երեսփոխանական ժողով
3) Կենտրոնական վարչություն
4) Սահմանադիր ժողով

21 **Թվարկվածներից որ՞ն է Արցախում և Սյունիքում 1720-ական թթ. հայ ազատագրական զինված պայքարի հետևանք.**

1) սեփական ուժերի նկատմամբ հավատի կորուստը
2) թուրք–պարսկական լծից եվրոպական երկրների օգնությամբ ազատագրվելու գիտակցության ամրապնդումը
3) հայ ժողովրդի ինքնագիտակցության և ազատասիրական ոգու բարձրացումը
4) արևելահայության նկատմամբ պարսիկների կողմից բռնությունների և հարկերի վերացումը

22 **Գտնել ճիշտ պատասխանը.**

Հայաստանի Հանրապետությունը մասնակցեց Փարիզի հաշտության խորհրդաժողովին և իրավական (դե յուրե) ճանաչում ստացավ Անտանտի երկրների կողմից, որովհետև՝

1) այդ մասին տերությունների ղեկավարները պայմանավորվել էին ՄԱԿ-ի վեհաժողովում:
2) նա այդ իրավունքը ստացել էր Ազգերի լիգայի կողմից:
3) նորահռչակ հայկական պետության զինված ուժերը պատերազմում էին Խորհրդային Ռուսաստանի դեմ:
4) նորահռչակ հայկական պետությունը դարձել էր աշխարհամարտի մասնակից կողմ:

23 **Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

ա. Սմբատ Արծրունու օծումը հայոց թագավոր
բ. Աբգար Թոխաթեցու գլխավորած պատվիրակության մեկնումը Վենետիկ
գ. Էջմիածնի գաղտնի խորհրդակցության հրավիրումը Ստեփանոս Սալմաստեցու կողմից
դ. Ամենայն հայոց կաթողիկոսության վերահաստատումը Ս. Էջմիածնում
ե. Ամասիայի թուրք-պարսկական հաշտության պայմանագրի կնքումը
զ. Ջհանշահի գահակալման ավարտը

1) դ, ա, զ, գ, ե, բ
2) ա, դ, զ, գ, բ, ե
3) դ, զ, ա, գ, ե, բ
4) դ, ա, գ, զ, բ, ե

24 **Տրված իրադարձություններից ո՞րն է տեղի ունեցել չորրորդը՝ ըստ ժամանակագրական հաջորդականության.**

ա. ԽՍՀՄ կառավարության որոշումը սփյուռքահայերի զանգվածային ներգաղթը դադարեցնելու մասին
բ. հայ ազգային երեք կուսակցությունների կողմից համազգային կենտրոնական մարմնի ստեղծումը՝ Հայկական հարցի լուծման համար գործողության միասնական ծրագիր մշակելու նպատակով
գ. «Տրանսիլվանիա» շոգենավով հայրենադարձների առաջին խմբի ժամանումը Բաթում
դ. Ամերիկայի Հայկական ազգային խորհրդի կողմից հեռագրի ուղարկումը երեք տերությունների ղեկավարներին՝ Հայկական հարցը առաջիկա կոնֆերանսի օրակարգում ընդգրկելու խնդրանքով
ե. 89-րդ Թամանյան դիվիզիայի կազմացրվելը
զ. Հայերի զանգվածային աքսորը Ալթայի երկրամաս

1) դ
2) զ
3) ա
4) ե

25 **Կատարել համապատասխանեցում.**

Հիմնադիր արքա	*Քաղաք*
1. Սարդուրի I	ա. Զարիշատ
2. Արգիշտի I	բ. Մծուրք
3. Արտաշես I	գ. Տուշպա
4. Շամ Երվանդական	դ. Երվանդաշատ
5. Սանատրուկ	ե. Էրեբունի
	զ. Սամոսատ

1) 1–զ, 2–ե, 3–բ, 4–դ, 5–զ
2) 1–զ, 2–ե, 3–ա, 4–դ, 5–բ
3) 1–զ, 2–ե, 3–ա, 4–զ, 5–բ
4) 1–ե, 2–զ, 3–ա, 4–զ, 5–դ

26 **Կատարել համապատասխանեցում.**

Հրատարակման վայր	*Պարբերական*
1. Վենետիկ	ա. «Ազգասեր»
2. Կալկաթա	բ. «Լրո գիր»
3. Կ. Պոլիս	գ. «Բազմավեպ»
4. Թիֆլիս	դ. «Կովկաս»
	ե. «Ազդարար»

1) 1–զ, 2–ա, 3–բ, 4–դ
2) 1–դ, 2–գ, 3–ա, 4–բ
3) 1–ա, 2–բ, 3–ե, 4–դ
4) 1–զ, 2–ա, 3–ե, 4–դ

27 **Ի՞նչ տարածքներ էր զբաղեցնում հնդեվրոպական նախահայրենիքը.**

1) Հայկական լեռնաշխարհը, Իրանական սարահարթի հյուսիսարևմտյան, Փոքր Ասիայի արևմտյան, Միջագետքի հյուսիսային շրջանները
2) Հայկական լեռնաշխարհը, Փոքր Ասիայի արևելյան, Միջագետքի հյուսիսային և Իրանական սարահարթի հյուսիսարևմտյան շրջանները
3) Հայկական լեռնաշխարհը, Միջագետքի արևելյան, Փոքր Ասիայի հյուսիսային, Իրանական սարահարթի հյուսիսարևելյան շրջանները
4) Հայկական լեռնաշխարհը, Փոքր Ասիայի արևելյան, Միջագետքի հյուսիսային և Իրանական սարահարթի հյուսիսարևելյան շրջանները

28 Ե՞րբ է զոհվել հայոց իշխան Գրիգոր Մամիկոնյանը.

1) 686 թ.
2) 681 թ.
3) 685 թ.
4) 689 թ.

29 Հայհեղկոմը վերակազմավորվել է ՀՍԽՀ Ժողովրդական կոմիսարների խորհրդի՝

1) 1920 թ. դեկտեմբերի 6–ին
2) 1921 թ. ապրիլի 2–ին
3) 1921 թ. հունիսի 24–ին
4) 1921 թ. մայիսի 21–ին

30 Ո՞ր պատմիչն է հավաստիացնում, թե Արտաշատի տեղանքն ընտրել է հռչակավոր զորավար Հաննիբալը.

1) Պլուտարքոսը
2) Ստրաբոնը
3) Պոլիբիոսը
4) Տակիտոսը

31 Ո՞վ է գլխավորել Բաքվի հայերի 1905 թ. ինքնապաշտպանությունը հայ–թաթարական ընդհարումների ժամանակ.

1) Սնքարեցի Սաքոն
2) Համազասպը
3) Վարդանը
4) Նիկոլ Դումանը

32 Ո՞ւմ ընդունած կոչից է մեջբերված հատվածը.

«Թուրքիայի կորստաբեր պահանջները և վիրավորական տմարդությունը վերջապես ազդեց հայ ժողովրդի հոգու վրա: Այժմ, գոնե, պարզվում է, որ մենք մեր հույսը պիտի կապենք մեր խիզախության հետ: … Վերջին պատերազմական ու քաղաքական անցքերը որոշ լքում, ոգու անկում էին առաջացրել: Այսօր այդ հիվանդությունը բուժվում է, հին խիզախությունը վերածնվում է, և այդ փրկության միակ իրական ելքն է մեր դժվարին պայմաններում ու ժամանակներում»:

1) Հայկական կորպուսի հրամանատարի
2) Հայաստանի ապահովության խորհրդի
3) Երևանի Հայոց ազգային խորհրդի
4) Արևմտահայերի ազգային խորհրդի

33 **Հայոց ո՞ր սպարապետն է ասել հետևյալ խոսքերը.**

«Իմ այնքան ծառայությունների, արյուն ու քրտինք թափելու… հատուցումն ա՞յս եղավ: Բայց այս մահը երանի՛ թե ձիու վրա ինձ հասներ»:

1) Վասակ Մամիկոնյան
2) Մանվել Մամիկոնյան
3) Վահան Մամիկոնյան
4) Մուշեղ Մամիկոնյան

34 **Ո՞վ է մեջբերված հատվածի հեղինակը.**

«Հայոց թագավոր [……..]–ը ուներ միջակ հասակ, բայց հակված էր դեպի ամեն մի մեծ բան և մանավանդ դեպի պատերազմական գործերը: Նա հավատարիմ պահապան էր արդարադատության և իր կենցաղավարության մեջ զուսպ էր, նաև չափավոր ու ողջամիտ էր, ինչպես լավագույնները հույների և հռոմայեցիների մեջ»:

1) Ապպիանոսը
2) Արիանոսը
3) Տակիտոսը
4) Ամմիանոսը

35 **Ի՞նչ անուններով է հայտնի 867 թ. Բյուզանդիայում գահ բարձրացած արքայատոհմը.**

1) Արշակունյաց
2) Բագրատունյաց
3) Հայկական
4) Հայկյան
5) Մակեդոնական

36 **Ընտրել տերմինների կամ հասկացությունների ճիշտ բացատրությունները.**

1) Խորհրդային իրականությունն առանց ուժային միջոցների, գաղափարական ճանապարհով փոփոխելու պայքարի ուղին ընտրած մարդկանց կոչում էին իրավապաշտպան:
2) 1989 թ. դեկտեմբերի 1–ին Հայաստանի Գերագույն խորհրդի արտահերթ նստաշրջանում ընդունված որոշումը վերնագրված էր «Հայկական ԽՍՀ-ի և Լեռնային Ղարաբաղի վերամիավորման մասին»:
3) Երևանում 1988-1990 թթ. տեղի ունեցած հանրահավաքների վայր Թատերական հրապարակն այժմ կոչվում է Անկախության հրապարակ:
4) Ազգային միացյալ կուսակցության 1973 թ. ձևավորված ղեկավար մարմինը՝ խորհուրդը, որդեգրեց մի ռազմավարություն, որը կոչվում էր «Անկախություն՝ հանրաքվեի ճանապարհով»:
5) 1991 թ. գարնանը ԼՂԻՄ Մարտակերտի շրջանի Գետաշեն, Մարտունաշեն և Շահումյան բնակավայրերում խորհրդային բանակի հետ համագործակցությամբ ադրբեջանական իշխանությունների իրականացրած գործողությունը կոչվում էր «Կոլցո»՝ «Օղակ»:

37 **Թվարկվածներից որո՞նք են Գավգամելայի ճակատամարտի արդյունքներ.**

1) Մեծ Հայքը մտավ Ալեքսանդր Մակեդոնացու տերության մեջ:
2) Միթրաուստեսը հռչակեց Փոքր Հայքի անկախությունը:
3) Սելևկյան պետությունը մասնատվեց ստրատեգիաների:
4) Հայաստանը թոթափեց Սելևկյան գերիշխանությունը:
5) Դարեհ II–ը զրկվեց աքեմենյան գահից:
6) Երվանդ III–ը դարձավ Մեծ Հայքի թագավոր:

38 **Թվարկվածներից որո՞նք պատճառ հանդիսացան պարսից արքայի կողմից Հայոց արքա Խոսրով IV–ի գերեվարման համար.**

1) թագավորի ինքնուրույն հարաբերությունները հռոմեական կայսեր հետ
2) Խոսրով IV–ի ամուսնությունը Մանվել Մամիկոնյանի դստեր հետ
3) Համազասպ Մամիկոնյանին հայոց սպարապետ նշանակելը
4) Սահակ Պարթևին հայոց կաթողիկոս նշանակելը
5) Փոքր Հայքի երկու մասերի միավորումը

39 **Գտնել սխալ փաստարկները.**

1) Արիստակես կաթողիկոսի սպանությունից հետո կաթողիկոս է դարձել նրա ավագ եղբայր Վրթանեսը:
2) Վաչե Մամիկոնյանը մազքութերին ջախջախել է Օշականի Ցլու գլուխ լեռան մոտ:
3) Սահակ Պարթևը կարողացավ չեզոքացնել իրեն հակաթոռ նշանակված ասորի Շամուելի գործունեությունը:
4) Տրդատ Մեծը հազարապետ էր նշանակել Արտավազդ Մանդակունուն:
5) Տիրան արքային ձերբակալել էր Ատրպատականի մարզպան Ատրվշնասպը:

40 **Տրված պնդումներից որո՞նք են ճիշտ.**

1) Միացյալ Հայաստանի հռչակագիրը վճռական քայլ էր հայության երկու հատվածների մերձեցման համար, բայց այն արտաքին–քաղաքական որևէ նշանակություն չունեցավ:
2) ԱՄՆ-ի վարչապետ Վուդրո Վիլսոնը համաձայնվեց ստանձնելու հայ–թուրքական սահմանները որոշելու իրավարարի առաքելությունը:
3) Հաճընի 1920 թ. ինքնապաշտպանության բարձրագույն խորհրդի նախագահն էր Պետրոս Սարաճյանը, պաշտպանության ուժերի հրամանատարը՝ Սարգիս Ճեպեճյանը:
4) Սան Ռեմոյի կոնֆերանսը հավանություն տվեց միացյալ հայկական պետության ստեղծմանը, սակայն դաշնակիցները շարունակում էին հարցը կապել Անգլիայի կողմից Հայաստանի մանդատը ստանձնելու խնդրի հետ:
5) Կիլիկիայի հայերի նոր կոտորածների պատասխանատվությունը դնելով Մ. Քեմալի և Կ.Պոլսի օսմանյան կառավարության վրա՝ դաշնակիցները գործնական որևէ քայլ չարեցին դրանք դադարեցնելու համար:

41 **Գտնել այն իրադարձությունը, որը խախտում է ստորև տրված շարքի ժամանակագրական հաջորդականությունը.**

1) Պարթևստանում Վաղարշ I Արշակունու գահ բարձրանալը
2) Հռանդեայի (Եռանդ) ճակատամարտում հռոմեացիների պարտությունը
3) Արեգ–Միհրի տաճարի կառուցումը Գառնիում
4) Հայ հայրենասերների դիմադրությունը Կորբուլոնի զորքերին Տարոն գավառում
5) հայոց Բակուր Արշակունուն գահընկեց անելը և Հռոմ տանելը
6) հույն մատենագիր Հիպպոլիտիսի «Ժամանակագրության» գրվելը

42 **Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

1) Ադանայի նահանգում 30 հազար հայերի կոտորածը
2) Մ. Գիրսի և Հ. Վանգենհայմի՝ Արևմտյան Հայաստանի համար 6 կետից բաղկացած բարենորոգումների ծրագրի կազմումը
3) Բալկանյան առաջին պատերազմի սկիզբը
4) Հայ սահմանադրական ռամկավար կուսակցության ստեղծումը
5) Պողոս Նուբար փաշային Եվրոպայում կաթողիկոսի լիազոր ներկայացուցիչ նշանակելը

43 **Տարեթվերը համապատասխանեցնել պատմական իրադարձություններին.**

Ա. հայ–արաբական դաշնագրի կնքումը
Բ. Արմինիա փոխարքայության կազմավորումը
Գ. Հայաստանի վերամիավորումը Թեոդորոս Ռշտունու կողմից
Դ. Խաչափայտի վերադարձը Երուսաղեմ
Ե. Քադիսիայի ճակատամարտը

1) 639 թ.
2) 652 թ.
3) 637 թ.
4) 631 թ.
5) 701 թ.
6) 636 թ.

Ա	Բ	Գ	Դ	Ե

44 **Կատարել համապատասխանեցում.**

Ա. Կարո Հալաբյան
Բ. Արուս Ոսկանյան
Գ. Գրիգոր Արեշյան
Դ. Հայկանուշ Դանիելյան
Ե. Լևոն Քալանթարյան

1) երկրաբան
2) դերասան
3) երգիչ
4) բժիշկ
5) ճարտարապետ
6) ռեժիսոր

Ա	Բ	Գ	Դ	Ե

45 **Ստորև տրված պնդումներից յուրաքանչյուրի համար ընտրել՝ «Ճիշտ է», «Սխալ է», «Չգիտեմ» պատասխաններից որևէ մեկը.**

1) Մանազկերտի ճակատամարտից հետո սելջուկների մի մասը հաստատվել էր Փոքր Ասիայում և այստեղ ստեղծել իրենց պետությունը՝ Իկոնիայի սուլթանությունը:
2) Կիլիկիայի կառավարիչ նշանակված Ապլղարիպ Արծրունուն էին հանձնվել Մսիս, Ադանա, Տարսոն քաղաքները և Լամբրոն ու Պապեռոն բերդերը:
3) Փիլարտոս Վարաժնունին, հենվելով հիմնականում խաչակիրներից կազմված զինուժի վրա, կարողացավ որոշ ժամանակ կանգնեցնել սելջուկների առաջխաղացումը դեպի հայկական իշխանության սահմանները:
4) Խաչակիրները համագործակցել են Կիլիկիայում ստեղծված հայկական իշխանության հիմնադիր Ռուբեն իշխանի հետ:
5) Ռուբինյան իշխանության գոյությանը սպառնում էին ոչ միայն Բյուզանդիան, այլև սելջուկները, ուստի Կոստանդին իշխանը հարկադրված էր պայքարել երկու թշնամիների դեմ:
6) Խաչակիրների երկու բանակներ 1096 թ. մտել էին Կիլիկիա և ձեռնամուխ եղել Դաշտային Կիլիկիայի քաղաքների նվաճմանը:

Բ ՄԱԿԱՐԴԱԿ

46 **Գտնել տերմինների կամ հասկացությունների սխալ բացատրությունները.**

ա. Անահիտը հայոց դիցարանում մեծարվել է «Ոսկեմայր» տիտղոսով:
բ. Արգիշտի Ի–ի զորքերը Զագրոսյան լեռներով հասել են մինչև Պարսուա, որը հետագայում կոչվել է Պարսկահայք:
գ. Վարչական առումով Վանի թագավորությունը բաժանված էր միավորների, որոնք կոչվում էին մարզեր:
դ. «Սահմանապահ կուսակալ»–ը Արտաշեսյան թագավորության շրջանի գործակալություններից է:
ե. Աքեմենյանների օրոք Հայաստանի արևմտյան մասի կառավարիչը կոչվում էր սատրապ:
զ. Արարատյան համահայկական թագավորության մեջ թագավորին կից գործող ավագների խորհրդի անդամները կոչվում էին արքայի «խորհրդականներ»:
է. Հայկազուն–Երվանդունիների գահակալության սկզբնական ժամանակաշրջանում երկրի արքան հայտնի էր «Հայոց թագավոր» տիտղոսով:
ը. Արարատյան համահայկական թագավորությունը հինարևելյան տիպի բացարձակ միապետություն էր:

1) ա, զ, ը
2) գ, ե, է
3) գ, դ, է
4) բ, դ, ե

47 **Գտնել տերմինների կամ հասկացությունների ճիշտ բացատրությունները.**

ա. Սյունիքում կազմավորված կիսանկախ իշխանությունները կոչվել են սղնախներ:
բ. Կովկասում 1846 թ. ստեղծված վարչական միավորը կոչվում էր Կովկասի փոխարքայություն:
գ. 1826–1828 թթ. ռուս–պարսկական պատերազմի օրերին մի խումբ հայ մտավորականների մշակած ազատագրական նախագծի համաձայն՝ ռուսական կայսր Նիկոլայ Ի–ը կրելու էր նաև «Հայոց թագավոր» տիտղոսը:
դ. Արևելյան Հայաստանի տարածքում ռուսական իշխանությունների ստեղծած և 12 տարի գոյություն ունեցած վարչական միավորը կոչվում էր Երևանի նահանգ:
ե. Վերին Բասենի վարչական կենտրոն Հասան կալան ռուս գրող Ա. Պուշկինն անվանել է «Արզրումի (Էրզրում) բանալի»:
զ. Ռուսաստանի կազմում Շամքոր կենտրոնով 1840 թ. ստեղծված վարչական միավորը կոչվում էր Կասպիական մարզ:
է. Գ. Գոլիցինի փոխարեն նշանակված Ի. Վորոնցով–Դաշկովի պաշտոնը կոչվում էր Կովկասի փոխարքա:

1) ա, զ, է
2) գ, դ, զ
3) գ, ե, է
4) բ, դ, ե

48 **Ստորև թվարկված պատմական իրադարձությունների պատճառներից կամ հետևանքներից որո՞նք են ճիշտ.**

ա. Սարդուրի II–ի կողմից Բաբելոնիայի վերանվաճման հետևանքով հայոց աշխարհակալության հարավային սահմանը կրկին հասավ Պարսից ծոց:
բ. Վանի թագավորության և սկյութների միջև հաստատված դաշնակցային հարաբերությունների հետևանքը վերջիններիս՝ Փոքր Ասիայի արևելքում հաստատվելն էր:
գ. Վանի արքայատոհմից իշխանության անցումը Հայկազուններին տեղի ունեցավ Ասորեստանի ռազմական միջամտության և երկրի ներսում ծագած խռովությունների հետևանքով:
դ. Արտաշես I–ի միավորիչ գործունեության հետևանքով հայկական բոլոր տարածքները, բացառությամբ Փոքր Հայքի, միավորվեցին մեկ միասնական պետության մեջ:
ե. Տիգրանակերտի անկման պատճառն այն էր, որ քաղաքը պաշտպանող օտարազգի վարձկանները, կաշառվելով Լուկուլլոսի կողմից, հռոմեացիների առջև դավաճանաբար բացեցին դարպասները:
զ. Ակցիումի ճակատամարտից հետո հայ–պարթևական միացյալ ուժերի հաղթության շնորհիվ Հայաստանում գտնվող հռոմեական լեգեոնները դուրս շպրտվեցին երկրից:
է. Տիգրան III–ից հետո առանց Հռոմի համաձայնության գահ բարձրացավ Տիգրան IV–ը և այդ պատճառով թագավորեց որպես անկախ միապետ:

1) ա, ե, զ, է
2) բ, գ, ե
3) բ, դ, ե, է
4) ա, դ, զ

49 **Թվարկվածներից որո՞նք Խորհրդային Հայաստանի արդյունաբերացման հետևանքներից չեն.**

ա. Հայաստանն աստիճանաբար ագրարային երկրից վերածվեց արդյունաբերական հանրապետության:
բ. Կրճատվեց խորհրդահայ մտավորականության և ճարտարագիտատեխնիկական անձնակազմի քանակը:
գ. Բանվոր դասակարգի քանակը մի քանի անգամ աճեց:
դ. Առաջացրեց բնապահպանական խնդիրներ:
ե. Հրազդան գետի վրա հիդրոէլեկտրակայանների կառուցումը հանգեցրեց Սևանա լճի մակարդակի իջեցմանը:
զ. Ստեղծվեցին մի շարք կոմունաներ, արտելներ, սովխոզներ:
է. Հայաստանի խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակը կրճատվեց 30 %–ով:

1) դ, ե, զ
2) բ, զ, է
3) ա, դ, ե
4) բ, գ, է

50 **Տրված իրադարձություններից ո՞րն է տեղի ունեցել յոթերորդը՝ ըստ ժամանակագրական հաջորդականության.**

ա. Հռոմի դրածո Արտավազդ III–ի վտարումը Հայաստանից
բ. Արտավազդ II–ի եղերական մահը
գ. հռոմեա–պոնտական պատերազմների սկիզբը
դ. Առաջին եռապետության կազմավորումը Հռոմում
ե. Արտաշես II–ի դավադիր սպանությունը
զ. Խառանի ճակատամարտը
է. Պարթև թագաժառանգ Բակուրի հրամանատարությամբ հռոմեացիների վտարումը Ասորիքից, Կիլիկիայից, Փյունիկիայից, Պաղեստինից և Հրեաստանից
ը. հռոմեա–պոնտական պատերազմների ավարտը
թ. Կրասոսի պարթևական արշավանքի սկիզբը
ժ. Միհրդատ Եվպատորի մահը

1) է
2) թ
3) բ
4) զ

51 **Իրադարձություններից ո՞րն է տեղի ունեցել հինգերորդը՝ ըստ ժամանակագրական հաջորդականության.**

ա. Մոսկվայում ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության նիստը Լեռնային Ղարաբաղի հարցի վերաբերյալ
բ. Սպիտակի աղետալի երկրաշարժը
գ. Հատուկ կառավարման կոմիտեի ստեղծումը ԼՂԻՄ–ում
դ. հայ բնակչության կոտորածը Սումգայիթում
ե. «Ղարաբաղ» կոմիտեի ստեղծումը
զ. Կ. Դեմիրճյանի ազատվելը ՀԿԿ կենտկոմի առաջին քարտուղարի պաշտոնից
է. Մ. Գորբաչովի դիմումը «Ադրբեջանի և Հայաստանի աշխատավորներին, ժողովուրդներին»
ը. «Ղարաբաղ» կոմիտեի վերանվանվելը «Ղարաբաղյան շարժման Հայաստանի կոմիտե»–ի
թ. ՀԽՍՀ 16 շրջաններում հատուկ դրություն մտցնելը

1) թ
2) ը
3) ա
4) զ

52 **1918 թ. տեղի ունեցած իրադարձությունների տրված շարքում ո՞րն է վեցերորդը՝ ըստ ժամանակագրական հաջորդականության.**

ա. Կարսի հանձնումը թուրքերին
բ. Ղարաքիլիսայի գրավումը թուրքերի կողմից
գ. Ներքին Թալինի բերդի գրավումը հայ կամավորների կողմից
դ. Սարդարապատի կայարանի հետգրավումը հայկական զորքի կողմից
ե. Բաշ Ապարանի ճակատամարտի ավարտը
զ. Ալեքսանդրապոլի գրավումը թուրքական զորքի կողմից
է. Սարդարապատի գրավումը թուրքական զորքի կողմից
ը. Սարիղամիշի գրավումը թուրքական զորքի կողմից
թ. Ղարաքիլիսայի ճակատի կազմակերպումը

1) բ
2) թ
3) դ
4) գ

53 **Հրամանատարների անունները համապատասխանեցնել 1914–1915 թթ. ձևավորված կամավորական ջոկատներին.**

1. I ջոկատ	ա. Վարդան
2. III ջոկատ	բ. Ն. Աղբալյան
3. V ջոկատ	գ. Անդրանիկ
4. VI ջոկատ	դ. Համազասպ
5. VII ջոկատ	ե. Հ. Արղության
6. VIII ջոկատ	զ. Դրո
	է. Ա. Ջանփոլադյան

1) 1–զ, 2–դ, 3–ա, 4–է, 5–ե, 6–բ
2) 1–ա, 2–գ, 3–դ, 4–զ, 5–ե, 6–է
3) 1–զ, 2–ա, 3–բ, 4–ե, 5–դ, 6–զ
4) 1–զ, 2–ա, 3–դ, 4–ե, 5–գ, 6–բ

54 **Բերված պնդումներից որո՞նք են ճիշտ.**

ա. Հայաստանի ազատագրությունը, ըստ Հ. Էմինի ծրագրի, պետք է իրականանար միայն հայերի ուժերով՝ օտար լծի դեմ համաժողովրդական ապստամբության շնորհիվ:
բ. Արևելյան Վրաստանն ընդգրկող Քարթլի–Կախեթի թագավորության սահմաններում էին ներառված հարավային Հայաստանի մի քանի գավառներ՝ Լոռին, Փամբակը, Շամշադինը, Սյունիքը, Ախալցխան:
գ. Ռուսական արքունիքը Հայ եկեղեցու միջոցով իր ազդեցությունն էր պահպանում նաև արևմտահայության և գաղութահայության վրա:
դ. Բեռլինում մեծ տերությունների ներկայացուցիչներն ուշադրությամբ ծանոթացան Մ. Խրիմյանի գլխավորած հայ պատվիրակների խնդրագրերին և նրանց թույլ տվեցին մասնակցել վեհաժողովին:
ե. 1877–1878 թթ. պատերազմի օրերին կրկին ապստամբած զեյթունցիների պայքարի արդյունքում Մարաշի փաշան ստիպված է լինում Պապիկ իշխանին ճանաչել Զեյթունի քաղաքագլուխ:
զ. 1903 թ. գարնանը Սասունի հայտնի Շենիկ գյուղում ստեղծվել է ինքնապաշտպանական ղեկավար մարմին՝ Անդրանիկի գլխավորությամբ:
է. Դժոխք Հրայրը զգալի աշխատանք է տարել հայ–քրդական դաշինք ստեղծելու ուղղությամբ:

1) ա, դ, է
2) գ, ե, է
3) գ, ե, զ
4) բ, դ, զ

55 **Ընտրել այն պնդումները, որոնք արտացոլում են Լևոն II–ի ներքին ու արտաքին քաղաքականության արդյունքները.**

ա. Լիակատար հաջողությամբ պսակվեց Անտիոքի համար պայքարը, այն միացվեց Կիլիկյան Հայաստանին:
բ. Կարգավորվեց երկրի դրամական շրջանառությունը:
գ. Նա կարևոր հաղթանակներ տարավ մամլուքների նկատմամբ:
դ. Հայոց պետությունը ստեղծեց ռազմական և առևտրական նավատորմ:
ե. 1216 թ. նա գրավեց Անտիոք քաղաքը և իշխանությունը հանձնեց իր ազգական Ռայմոնդ–Ռուբենին:
զ. Վերաշինվեցին և բարեկարգվեցին Այաս և Կոռիկոս նավահանգիստները:
է. Նա այդպես էլ չկարողացավ թագավորական տիրույթներին միացնել Լամբրոն բերդը:
ը. Թագավորը արտոնություններից զրկեց Վենետիկի և Ջենովայի վաճառականներին:

1) բ, զ, է
2) ա, բ, գ, է
3) դ, է, ը
4) բ, դ, ե, զ

56 **Գտնել ճիշտ պնդումները.**

ա. Ք. ա. VII դարի առաջին կեսին Հայկական լեռնաշխարհի հարավ–արևմուտքում վերականգնված Հայկազունների իշխանությունը համապատասխանում է սեպագիր աղբյուրների Արմե–Շուբրիա պետական կազմավորմանը:
բ. Ք. ա. 609 թ. Վանն արդեն Պարույր նահապետի իշխանության տակ էր:
գ. Տիգրան Երվանդյանին հաջորդել է նրա որդի Վրույրը:
դ. Հայերի ապստամբությունը ճնշելու համար Դարեհ I–ը ուղարկել է պարսիկ զորավար Վեհմիհրշապուհին:
ե. Ըստ Պատմահոր հաղորդման՝ Պարույր նահապետը միավորել է Սևանա լճից մինչև Տիգրիս ընկած ողջ տարածքը:
զ. Տիգրան Երվանդյանը մտերիմ հարաբերություններ ուներ պարսից արքա Կյուրոս Կրտսերի հետ:
է. Ք. ա. 580–570–ական թթ. նշանավոր դարձած Երվանդ I Սակավակյացի անունով նոր արքայատոհմը կոչվել է Երվանդական, Երվանդյան կամ Երվանդունի:

1) ա, բ, է
2) գ, դ, զ
3) ա, զ, է
4) բ, դ, ե

57 **Կատարել համապատասխանեցում.**

Տարեթիվ

1. 1920 թ. հունվար
2. 1920 թ. ապրիլ
3. 1920 թ. մայիս
4. 1920 թ. օգոստոս
5. 1920 թ. սեպտեմբեր
6. 1921 թ. սկիզբ

Իրադարձություն

ա. Այնթապի ինքնապաշտպանության սկիզբը
բ. թուրք–հայկական պատերազմի սկիզբը
գ. Մարաշի գրավումը թուրքերի կողմից
դ. ՀՀ պատվիրակության գործուղումը Մոսկվա
ե. «Հայկական լեգեոնի» լուծարումը
զ. «Ինքնավար Սյունիքի» հռչակումը
է. Այնթափցիների՝ իրենց քաղաքը հարկադրված լքելը

1) 1–զ, 2–ա, 3–բ, 4–դ, 5–է, 6–ե
2) 1–ա, 2–զ, 3–դ, 4–բ, 5–է, 6–զ
3) 1–զ, 2–ա, 3–դ, 4–ե, 5–բ, 6–է
4) 1–ա, 2–զ, 3–բ, 4–ե, 5–դ, 6–է

58 **Ընտրել տերմինների կամ հասկացությունների ճիշտ բացատրությունները.**

1) Կոմինտերնի բարձրագույն խորհրդի նախաձեռնությամբ Մոսկվայում կայացած խորհրդաժողովը կոչվում էր Արևելքի ժողովուրդների առաջին համագումար:
2) Հ. Քաջազնունու հրաժարականից հետո ստեղծված ՀՀ կառավարությունը հայտնի է «բյուրո–կառավարություն» անունով:
3) Հայաստանի առաջին հանրապետությունում համայնքային ինքնավարությունները կոչվել են զեմստվոներ:
4) Ալեքսանդրապոլում բոլշևիկների ստեղծած ապստամբության ղեկավար մարմինը կոչվում էր Հայաստանի Ռազմահեղափոխական կոմիտե:
5) Փետրվարյան ապստամբության հաղթանակից հետո Երևանում ստեղծված իշխանության մարմինը կոչվում էր Հայաստանի փրկության կոմիտե (ՀՓԿ):
6) Այն կազմակերպությունը, որին խորհրդային իշխանություններն օգտագործում էին պաշտոնական եկեղեցու դեմ պայքարում, կոչվում էր «Ազատ եղբայրության եկեղեցի» կամ «Նորացված եկեղեցի»:
7) Հայ ազգաբնակչության շահերը պաշտպանելու և ազգային հիմնախնդիրներին հետամուտ լինելու նպատակով ԱՄՆ–ում Հայ հեղափոխական դաշնակցության կողմից ստեղծված կազմակերպությունը կոչվում է Հայկական ազգային կոմիտե:
8) Ի. Ստալինի մշակած «Ռուսաստանի և անկախ հանրապետությունների փոխհարաբերությունների մասին բանաձևի նախագիծը» ստացել է «Ինքնիշխանության ծրագիր» անվանումը:
9) Արևելահայերի Հայոց ազգային համախորհրդակցության որոշմամբ ձևավորված օրենսդիր մարմինը կոչվել է Ազգային ժողով:

59 **Գտնել սխալ պատասխանները.**
Օտարների կողմից Հայաստանն անվանվել է՝

1) Սոմխեթի
2) Բիայնիլի
3) Հայասա
4) Արմինա
5) Հայք
6) Հայաստան
7) Հարմինույա
8) Ուրարտու

60 **Թվարկվածներից որո՞նք են պատմական իրադարձությունների իրական պատճառներ կամ հետևանքներ.**

1) Ժառանգական նախարարական խոշոր հողատիրության աճի հետևանքով թագավորական հողատիրությունը կրճատվում և ամփոփվում էր Բարձր Հայքում գտնվող Ոստան Հայոց գավառում:
2) Խաղամախյայի ճակատամարտի հետևանքը պարսից զորավար Միհրանի քսանհազարանոց զորքի պարտությունն էր:
3) Հայ–վրացական զինակցության արդյունքում սելջուկների լծից ազատվեցին Հայաստանի կենտրոնական ու հարավային շրջանները:
4) Թորոս I–ի կողմից Մանդալեի որդիներին մահապատժի ենթարկելու պատճառը հայոց Գագիկ II թագավորի սպանությունն էր:
5) Կոստանդին II կայսեր կողմից Թեոդորոս Ռշտունուն ազատ արձակելու պատճառը Հայաստանը Բյուզանդական կայսրության ոլորտում պահելն էր:
6) IX դարի վերջին Խլաթի ամիրայի՝ Հայաստան ներխուժելու պատճառը հայ–բյուզանդական 893 թ. կնքված պայմանագիրն էր:
7) Հովհաննես Կոմնենոս կայսեր 1137 թ. Կիլիկիա արշավանքի պատճառը Թորոս I–ին միջերկրածովյան շրջանից դուրս մղելն էր:
8) Անիի Բագրատունիներին ենթակա թագավորությունների առաջացման պատճառը զարգացած ավատատիրության շրջանում գոյություն ունեցող ավատատիրական մասնատվածությունն ու իշխանների կենտրոնախույս ձգտումներն էին:

61 **Ստորև տրված պատմական իրադարձությունների պատճառներից և հետևանքներից որո՞նք են ճիշտ.**

1) Պետրոս I–ի՝ Անդրկովկաս արշավելու հետևանքով ռուսական զորքերը հաստատվեցին Սև ծովի հարավային ափերին:
2) Արևելյան Հայաստանի՝ Ռուսաստանին միացման հետևանքով արևելահայերը ազատվեցին գաղութային ճնշումներից:
3) Ադրիանուպոլսի պայմանագրի արդյունքում Ռուսաստանը ձեռք բերեց Անդրկովկասի սևծովյան առափնյա շրջանները՝ Փոթի նավահանգստով:
4) 1862 թ. Զեյթունի ապստամբության ժամանակ զեյթունցիների հետ օսմանյան կառավարության փոխզիջման գնալու պատճառը Ռուսաստանի կողմից Թուրքիային պատերազմ հայտարարելու սպառնալիքն էր:
5) Բեռլինի պայմանագրով Օսմանյան կայսրությունը հետ ստացավ Բայազետը:
6) Անգլիայի և Ֆրանսիայի կողմից 1915 թ. Դարդանելի գործողությունը ձեռնարկելու պատճառը Կիլիկիայի և արաբական տարածքների գերմանական զորքերի ռազմակալման կասեցումն էր:
7) Համիդյան ցեղասպանական քաղաքականության արդյունքում 1890–ական թթ. 300 հազար հայ ոչնչացվեց և նույնքան էլ արտագաղթեց տարբեր երկրներ:
8) Առաջին աշխարհամարտի ժամանակ ցարիզմի կողմից հայ կամավորական ջոկատների ցրման գլխավոր պատճառը հայերի անկախական ձգտումներն էին:

62 **Գտնել ճիշտ պնդումները.**

1) Հայկազուն–Երվանդականներին թագավորությունը երկրորդ համահայկական թագավորությունն է:
2) Ըստ ավանդության՝ Բելի նկատմամբ Հայկի տարած հաղթանակի տարին (Ք. ա. 2492 թ.) համարվել է Հայոց մեծ թվականի սկիզբը:
3) Հայկական ավանդության համաձայն՝ Արամանյակի անունով է կոչվել Արմավիր մայրաքաղաքը:
4) Վանի թագավորության շրջանից հայտնի մեհենագրային համակարգն ունի բնիկ տեղական ծագում, այն բաղկացած էր շուրջ 300 նշաններից:
5) Հայկական լեռնաշխարհի կենտրոնով ձգվում է Հայկական Տավրոս լեռնաշղթան, որը սկսվում է Մեծ Արարատից:
6) Բեհիսթունյան արձանագրության պարսկերեն բաժնում Հայաստանը կոչվում է Արմինա:
7) Թորգոմա տունը գտնվել է Եփրատի վերին ավազանում և հիշատակվում է դեռևս Ք. ա. XX–XVIII դարերում:
8) ՀՀ–ի՝ բարձրությամբ երկրորդ լեռնագագաթ Կապուտջուղն ունի 3925 մ բարձրություն:

63 **Թվարկվածներից որո՞նք են տեղ գտել Մովսես Սարաֆյանի կազմած Հայաստանի ազատագրության ծրագրում.**

1) Կասպից ծովի ափին Հայաստանին պետք է տրամադրվեր նավահանգիստ:
2) Առաջարկվում էր Ռուսաստանում բնակվող հայերից և վրացիներից կազմել կամավորական զորաջոկատներ և ռուսական զորքերի հետ ուղարկել Վրաստան:
3) Հերակլ II–ը կարող էր հայ, ռուս և վրացի զինվորներ ուղարկել Երևան և գահընկեց անել տեղի խանին:
4) Հայաստանի մայրաքաղաք էր դառնալու Վաղարշապատը կամ Անին:
5) Հայոց թագավորի ընտրությունը պետք է կատարեր ռուսական կայսրը, իսկ օծումը պետք է տեղի ունենար Էջմիածնում:
6) Հակաթուրքական պայքարի մեջ անհրաժեշտ էր ընդգրկել նաև Արցախի մելիքներին՝ նրանց տրամադրելով ռազմական հանդերձանք և զենք:
7) Հայաստանի կառավարությունը Մոսկվայում պետք է ունենար իր դեսպանը:
8) Հայաստանն ազատագրելուց հետո պետք է ստեղծվեր հայկական պետություն, և Արցախի մելիքներից մեկը դառնար Հայաստանի թագավոր:

64 **Տրված փաստարկներից որո՞նք են ճիշտ.**

1) Հայկական 76–րդ լեռնահրաձգային դիվիզիան, որ կազմավորվել էր դեռ 1920–1922 թթ. Հայաստանում, հատկապես աչքի ընկավ Ստալինգրադի ճակատամարտում և վերակազմավորվեց 51–րդ գվարդիական հրաձգային դիվիզիայի:
2) Հայ ժողովրդի ավելի քան 160 000 զավակներ պատերազմին մասնակցել են հայկական ազգային դիվիզիաների կազմում:
3) Հայրենական մեծ պատերազմի 64 հայ գեներալներից 6–ը հետագայում դարձել են մարշալներ:
4) Խորհրդա–ֆիննական պատերազմում հայերից 4 հոգի արժանացել են ԽՍՀՄ հերոսի կոչման:
5) 408–րդ հայկական դիվիզիան Կերչի մոտ մղված մարտերից հետո մասնակցեց նաև Բեռլինի գրավման օպերացիային:
6) Փառքի 3-րդ, 2-րդ և 1-ին աստիճանի շքանշաններով պարգևատրված 27 հայ ռազմիկներ դարձել են զինվորական այդ շքանշանի լրիվ ասպետներ:
7) Կուրսկի ճակատամարտում ցուցաբերած անձնվիրության համար ԽՍՀՄ հերոսի կոչմանն արժանացավ օդաչու Սերգեյ Բուռնազյանը:

65 **Ո՞ր իրադարձություններն են խախտում տրված շարքի ժամանակագրական հաջորդականությունը.**

1) Սարգիս Կուկունյանի արշավանքը
2) Թավրիզում «Խարիսխ» զինագործական արհեստանոցի հիմնադրումը
3) Գում Գափու թաղամասում հնչակյանների կազմակերպած խաղաղ ցույցը
4) Գյալիսորի ձորի կռիվը Արաբոյի խմբի կողմից
5) Խանասորի արշավանքը
6) Բաբշենի կռիվը
7) Բաբը Ալիի ցույցը
8) Աղբյուր Սերոբի սպանությունը

66 **Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

1) Տարոնի իշխանության միացումը Բյուզանդական կայսրությանը
2) Անիի Սմբատաշեն պարիսպների կառուցման ավարտը
3) Աշոտ Երկաթի կողմից հակաարաբական դաշինքի կնքումը Կոստանդնուպոլսում
4) Դողսի ճակատամարտը
5) Դվինի ամիրայության միացումը Բագրատունյաց թագավորությանը
6) Գագիկ I–ի գահակալման սկիզբը
7) Սմբատի փոխարեն Գագիկ Արծրունուն խալիֆի կողմից Հայաստանի թագավոր ճանաչելը

67 **Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

1) Լենինականի (Գյումրի) պետական թատրոնի հիմնումը
2) խորհրդահայ ճարտարապետների միության ստեղծումը
3) պատանի հանդիսատեսի թատրոնի բացումը
4) Լոզանի կոնֆերանսի ավարտը
5) Արմֆանի բացումը
6) Հանրապետության առաջին պետական դրամատիկական թատրոնի բացումը
7) Գիտության և արվեստի ինստիտուտի գործունեության ավարտը

68 **Հեթանոսական աստվածների պաշտամունքի գլխավոր կենտրոնները համապատասխանեցնել աստվածների անուններին.**

Ա. Արեգ–Միհր
Բ. Անահիտ
Գ. Տիր
Դ. Արամազդ
Ե. Վահագն
Զ. Նանե

1) Տուրուբերան նահանգի Աշտիշատ ավան
2) Եկեղյաց գավառի Թիլ ավան
3) Այրարատ նահանգի Երազամույն վայր
4) Շիրակ գավառի Անի ամրոց
5) Եկեղյաց գավառի Երիզա ավան
6) Դարանաղյաց գավառի Անի ամրոց
7) Դերջան գավառի Բագառիճ ավան

Ա	Բ	Գ	Դ	Ե	Զ	Է

69 **Հայոց կաթողիկոսների անունները համապատասխանեցնել նրանց հետ կապված իրադարձություններին.**

Ա. Վարդանանց պատերազմը
Բ. Դվինի եկեղեցական առաջին ժողովի գումարումը
Գ. Ս. Հռիփսիմե տաճարի կառուցումը
Դ. Լևոն II-ի թագադրումը
Ե. Դվինի եկեղեցական երկրորդ ժողովի գումարումը
Զ. Ներսեհապատի ճակատամարտը
Է. Զվարթնոցի տաճարի կառուցումը

1) Ներսես Բ Բագրևանդացի
2) Գրիգոր Զ Ապիրատ
3) Հովսեփ Ա Վայոցձորցի
4) Հովհաննես Սսեցի
5) Կոմիտաս Մամիկոնյան
6) Ներսես Գ Տայեցի
7) Հովհաննես Ա Մանդակունի
8) Բաբգեն Ա

Ա	Բ	Գ	Դ	Ե	Զ	Է

70 **Ստորև տրված պնդումներից յուրաքանչյուրի համար ընտրել՝ «Ճիշտ է», «Սխալ է», «Չգիտեմ» պատասխաններից որևէ մեկը.**

1) 1990 թ. Անկախության հռչակագրով հաստատվում էր ՀՀ վճռականությունը՝ Արցախն իր տարածքի անբաժանելի մասը ճանաչելու վերաբերյալ:
2) Հայաստանի անկախության հանրաքվեից հետո՝ նույն տարվա սեպտեմբերին, Հայաստանի ՆԳՄ կառույցում ստեղծվեց Հատուկ գունդը:
3) ՀՀ նոր սահմանադրության նախագծի մշակմամբ զբաղվում էր 1991 թ. նոյեմբերին ստեղծված ՀՀ ԳԽ-ի սահմանադրական հանձնաժողովը:
4) Մինչև նոր Սահմանադրության ընդունումը Հայաստանի անկախության մասին հռչակագիրը ծառայում էր որպես պետության իրավական կարգավիճակը որոշող հիմնական փաստաթուղթ:
5) 1990 թ. նոյեմբերին ընդունված առաջին սահմանադրական օրենքով մինչև ՀՀ նոր սահմանադրության ընդունումը դադարեցվում էր Անկախության հռչակագրի հիման վրա ընդունված օրենքներին հակասող դրույթների գործողությունը:
6) ՀՀ Սահմանադրությունը դրեց ամբողջատիրական համակարգից ավտորիտար պետության անցնելու իրավական հիմքը: